Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, սակայն հայցվորը նշված նորմի ուժով պահանջ չի ներկայացրել պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ, 188-րդ, 189-րդ, 192-րդ, 194-րդ, 234.12-րդ և 362-րդ հոդվածների պահանջներով, Դատարանը՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Աշոտ Մուրադյանի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 11.05.2023 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/19Շ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2023 թվականի նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով կայացված «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչելու մասին պահանջը, բավարարել:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 11.05.2023 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/19Շ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2023 թվականի նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետով կայացված «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը ճանաչել անվավեր:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՇԻԼԱՋՅԱՆ